

## ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

### 2014-2015 ուստարվա ՀՀ դպրոցականների <<Ինֆորմատիկա>> առարկայի օլիմպիադայի կազմակերպման և անցկացման

1. Սույն Ընթացակարգով կարգավորվում են 2014-2015 ուսումնական տարվա Հայաստանի Հանրապետության դպրոցականների <<Ինֆորմատիկա>> առարկայի օլիմպիադայի /այսուհետ՝ Օլիմպիադա/ կազմակերպման և անցկացման հետ կապված հարաբերությունները:
2. Սույն Ընթացակարգով սահմանված Հավելվածների ձևանմուշները և Օլիմպիադայի վերաբերյալ այլ տեղեկություններ տեղադրված են [olymp.am](http://olymp.am) կայքում:
3. Օլիմպիադան կազմակերպվում է երեք փուլով:
4. Օլիմպիադան անցկացվում է 10-12-րդ դասարաններում սովորող աշակերտների համար՝ մեկ տարբերակով:
5. Ցածր դասարանում սովորողը կարող է մասնակցել օլիմպիադային:
6. Օլիմպիադայի առաջին փուլն անցկացվում է դպրոցում:
7. Օլիմպիադան կազմակերպելու համար դպրոցի տնօրենի հրամանով ստեղծվում է հանձնաժողով, որի կազմում չեն կարող ընդգրկվել ինֆորմատիկա առարկայի մասնագետներ:
8. Առաջին փուլին կարող է մասնակցել ցանկացած սովորող՝ այդ մասին տեղեկացնելով դպրոցի տնօրինությանը:
9. Դպրոցի տնօրինությունը մինչև 2015 թ. հունվարի 30-ը ներառյալ հայտագրված աշակերտների վերջնական ցուցակը՝ ըստ Հավելված 1-ի ներկայացնում է մարզային վարչություն:
10. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը /Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչությունը/ մինչև 2015 թ. փետրվարի 3-ը ներառյալ մասնակիցների ցուցակները ըստ հավելված 2-ի ներկայացնում է հանրապետական կազմկոմիտեին՝ [info@olymp.am](mailto:info@olymp.am) հասցեով:
11. Հանրապետական կազմկոմիտեն հաստատում է առաջին փուլի մասնակիցների ցուցակը, որը տեղադրվում է [olymp.am](http://olymp.am) կայքում:
12. Օլիմպիադայի առաջին փուլն անցկացվում է 2015 թ. փետրվարի 13-ին ժամը 12:00-ին՝ օնլայն եղանակով: Օլիմպիադայի անցկացման գործընթացին և ստուգման համակարգին ծանոթանալու նպատակով փետրվարի 10-ին, ժամը 14-ին կանցկացվի փորձնական, ուսուցողական փուլ:
13. Օլիմպիադայի երկրորդ /մարզային/ փուլն անցկացվում է մարզկենտրոններում:
14. Երկրորդ փուլին մասնակցում են առաջին փուլում լավագույն արդյունքներ ցուցաբերած մասնակիցները՝ հանրապետական կազմկոմիտեի որոշման համաձայն:

15. Օլիմպիադայի երկրորդ փուլն անցկացվում է 2015թ. մարտի 4-ին ժամը 10:00-ին՝ օնլայն եղանակով:
16. Օլիմպիադայի բոլոր փուլերի տարբերակները կազմում է հանրապետական առարկայական հանձնաժողովը:
17. Երկրորդ փուլի արդյունքները տեղադրվում են olymp.am կայքում:
18. Երկրորդ փուլի հաղթողները պարզևատրվում են մարզպետարանների /Երևանում քաղաքապետարանի/ դիպլոմներով և գովասանագրերով:
19. Առաջին և երկրորդ փուլերի առաջադրանքները և արդյունքները տեղադրվում են olymp.am կայքում:
20. Օլիմպիադայի երրորդ փուլն անցկացվում է Երևան քաղաքում՝ ՀՀ ԿԳ նախարարության կողմից սահմանված վայրում:
21. Օլիմպիադայի երրորդ փուլն անցկացվում է 2015 թ. մարտի 28-ին և 29-ին, սկիզբը՝ ժամը 10:00-ին:
22. Երրորդ փուլին մասնակցում են երկրորդ փուլում լավագույն արդյունքներ ցուցաբերած մասնակիցները՝ համաձայն հանրապետական կազմկոմիտեի որոշման:
23. Երրորդ փուլի հաղթողները պարզևատրվում են ՀՀ ԿԳ նախարարության դիպլոմներով և գովասանագրերով:
24. Երրորդ փուլի դիպլոմակիրները համարվում են ինֆորմատիկայի միջազգային օլիմպիադայի ՀՀ թիմի հավակնորդներ:
25. Տեղեկությունները կարելի է ստանալ olymp.am կայքից: